№ 101 Յունիսի 17 (29) **1880** Յունիսի 17 (29) № 101

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպեկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Դարալուրից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Մասիսի» Թղթակցութիւն։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հայերը Քաբուլի մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Յայտնի է, որ Թիէրի նախագահութեան ժամանակ Ֆրանսիան կոմունարներից շատերին, որոնք իրանց հայրենիքում ներքին երկպառակութիւն էին գցել, պատժեց մահվան պատժով, իսկ միւսներին աքսորեց Նոր-Կալէդոնիա երկիրը։

Բայց ոչոքին յայտնի չէր թէ աքսորանքի մէջ ինչպես էր վարվում ֆրանսիական զինուորական իշխանութիւնը քաղաքական դատապարտվածների հետ։

Այժմ, երբ Գրէվիի ժամանակ ներողութիւն ստացած մի քանի կոմունարներ վերադարձան իրանց հայրենիք, այդ վերադարձած քաղաքական յանցաւորներից մին, Սիմոն Մայէ, հրատարակեց իր ութ տարվայ բանտարկութեան մասին մէմուարներ։ Այստեղ, կարճ առաջներդող յօդուածում, անհնարելի է հակացողութիւն տալ ընթերցողին այդ սարսափելի, սիրտը պատռող գրուածքի մասին։ Ֆրանսիան, տասն և իններորդ դարի լուսաւորված Ֆրանսիան, այն երկիրը որ յայտնեց աղատութեան, եղբայրասիրութեան և հաւասարութեան սկզբունքները,—գործ է դնում իր քաղաքական յանցաւորներին պատժելու համար, նրանց տանջելու համար աւելի սարսափելի միջոցներ, քան թէ որ և է ժամանակ կրօնական ինկվիզիցիան էր գործ դնում հերետիկոսների դէմ....

Մենք հրաժարվում ենք մեր թոյլ գրիչով նկարագրել այն սարսափելի, անհաւատալի տանջանքները, որոնց ենթարկվում են Նոր-Կալէդոնիայի մէջ Ֆրանսիայի կոմունարները ֆրանսիական հանրապետութեան հրամանով....

Գազան, արիւնարբու բիւրդերը Հայաստանում հրեշտակներ են, համեմատելով ֆրանսիացի գազան օֆիցէրների, գնդապետների և գեներալների հետ, հանրապետութեան այդ ներկայացուցիչների հետ, ինչպէս նրանց նկարագրում է Սիմոն Մայէ։

Ոչ որ կամենում է ծանօթանալ այդ անհաւատալի գազանութիւնների հետ, թող կարդայ առս «Дѣло» ամսագրի մայիսի տետրակը, որի մէջ թարգմանված են Սիմոն Մայէ կոմունարի մէմուարները։

Մէմուարները այնքան սարսափելի բաներ են նկարագրում, այնքան անհաւատալի էին երևում ֆրանսիացիներին, որոնք տեղեկութիւն էլ չունէին թէ ինչ է պատահում ֆրանսիական կօլոնիաներում,—որ ֆրանսիական հասարակական կարծիքը սաստիկ յուզվեց, երբ Սիմոն Մայէի գիրքը լոյս տեսաւ։ Այդ գիրքը այնքան ահագին աղմուկ հանեց ամբողջ Ֆրանսիայում, որ ազգային ժողովում կառավարութեանը հարցումներ առաջարկվեցան, լսգրութեան մէջ սկսվեցաւ կատաղի բանակռիւ.... Կառավարութիւնը սկսեց հերքել Մայէից հաղորդված տեղեկութիւնների ճշգրտութիւնը, այն աստիճան հրէշաւոր էր երևում նրան ֆրանսիական զինուորական իշխանութեան բարբարոս վարմունքի նկարագրութիւնը։ Բայց շուտով նկարագրութեան ճշգրտութիւնը ստուգվեցաւ ականատես կոմունարների վկայութիւններով և լսգիրներում տպված նամակներով։ Այն ժամանակ կառավարութիւնը ըստիպվեցաւ քննութիւն նշանակել Նոր-Կալէդոնիայի վարչութեան վրա և մի քանի ամսից յետոյ վերցրեց իր կօլոնիաներից զինուորական իշխանութիւնը և նշանակեց քաղաքական իշխանութիւնը։

Ֆրանսիական «Le Livre» անունով ամսագիրը խորհուրդ է տալիս կարդալ Սիմոն Մայէի յիշատակարանը ամէն ազգութեան և ամէն դասակարգի մարդիկներին, որպէս զի կառավարածները ծանօթանան այն միջոցների հետ որոնք շատ անգամ գործ են դրվում յանցաւորների վերաբերութեամբ, իսկ կառավարողները կարդան, որպէս զի փոքր ինչ աւելի գութ ունենան։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸ ՔԱԲՈՒԼԻ ՄԷՋ *)

Անգլիայում հրատարակվող մի օրագրի մէջ տպվեցաւ մի յօդուած վերոյիշեալ վերնագրով, որի հեղինակն է Հնդկաստանի փէշաւոր քաղաքում բնակվող մտաւոր Լիւզը։ Այդ պարոնը մի քանի բարեկամների հետ փէշաւոր քաղաքում աւանների համար հիմնած ունէր մի դպրոց և ինքը մի քանի ամիս առաջ անձամբ գնացած էր Քաբուլ։ Քաբուլի մէջ նրա դտած հայերը մեր ամենեսս համար հետաքրքրական լինելով, հարկաւոր ենք համարում մի քանի քաղուածքներ անել նրա յօդուածից։

Պատերազմի ճանապարհորդի հաղորդած տեղեկութիւնների հանմամա, սկսեալ Նադիր շահի օրերից (1738 ամ.), Քաբուլում կայ հայոց մի եկեղեցի, որ գտնվում է Բալահիսար կոչված ամրոցի մէջ, ուր սպանվեցաւ Անգլիայի դեսպանը, Ժօզէֆ Վուլֆի անունով անգլիացի քարոզիչը 1832 թ.ին միշտ եկեղեցում քարոզ կարդաց, իսկ 1879 թվականին փէշաւոր քաղաքի ազգով աւագն հովիւը պատուելի Խոսրով-Շահ Նոյն եկեղեցում քարոզ կարդաց։

Քաբուլ տարվեցան հայերը Նադիր-շահի ձեռքով. Ոմանցից,—պարոն յօդուածագիրը չէ յիշում, միայն ասում է, որ սկզբում նրանց թիւը հասնում էր 200 ընտանիքի, իսկ այժմ մնացել են 4 այր, 8 կին և 2 երեխաներ, ընդամենը 14 հոգի։ Դրանք երկար տարիներ քահանայ չեն ունեցել և մերվում էին անգլիական եկեղեցու ներկայացուցիչների ձեռքով, որոնք ժամանակ առ ժամանակ այնտեղ այցելութիւն էին գործում։ Երկու հոգի մկրտվեցան 1839 թ.ին, 3 հոգի 1842-ին, իսկ շատերը դիմում էին Հնդկաստան փէշաւոր քաղաքի միսիոնարներից մկրտութիւն ընդունելու համար։

1842 թ.ին Քաբուլի մէջ հայոց եկեղեցուն այցելում մտաւոր Ալէն անունով անգլիացի քարոզիչը նոյնպես մկրտեց մի քանի հայերի, որոնցից մէկը Սարգիս Խրդր-խան դեռ կենդանի է։ Այդ այցելութեան մասին քարոզիչը հետևեալն է ասում.

«1842 ամ. օգոստոսի 1-ին Շէհրէ գնացի, իմ բարեկամ մտաւոր Ֆիկոկից լսած էի, որ նա Քաբուլի մէջ հայազգի քրիստոնեաներ է գտել և 1832 թ.ին նրանցից երկուսին մկրտել է,—ես էլ սկսեցի նրանց որոնել։ Շատերից հարցնելով, տայերին գտայ Բալահիսար ամրոցում, դէպի ձէլալ-ջադի դուռը տանող մի նեղ փողոցի մէջ։ Նրանց տները գտնվում էին փողոցի հարաւային կողմում։ Այս փողոցից դուրս գալով, անցայ մի բազմանայի մէջ, որի չորջը խանութներ և մէջը հայերի արհեստի և պարագմունքների վերաբերեալ զորձիքներ ու պարագայք կային։ Այստեղից մի նեղ դռնով մտայ եկեղեցու բակը։ Եկեղեցին փոքր ինչ մութ էր, բայց յատակը խալիներով պատած և խիստ մաքուր պահված տեսայ։ Եկեղեցու սեղանը դանվում էր արեւելեան կողմում, որ նայում էր դէպի արեւմուտք. սեղանի վրա դրած էր մի հին պատկեր, որ Ցիրուսի, Մարիամի և Յովսէփի նը-կարագրիչն էր ներկայացնում։ Սեղանի վրա 6 աշտանակ, երկու խաչ և 2 Աւետարան կային։ Իսկ նրա հանդէպ կար մի դրքակալ, որի վրա դրած էր ժամագիրքը։ Մեզ եկեղեցին տանող հայերը պատմում էին, թէ իրանց նախնիքը Քաբուլ բերված են եղել Նադիր շահի ձեռքով, որոնց թիւը հասնում էր 200 ընտանիքի, իսկ այժմ մնացել է 14 ընտանիք միայն, որոնք հաշվում են 35 հոգի թէ արական և թէ իգական սեռից։ Այստեղի հայերի արհեստը ճերմակի գինի պատրաստել և արաղ քաշելն է։ Մեզ մօտ գտնվող հայերը բարեհաճաբարութիւններ և բռնաբարութիւններ են կրում։

«Այդ հայերի հարատեւութեան ապէր լինելը կամ չը լինելը ինձ յայտնի չէ։ Նրանց թաղը մէկ աղքատ թաղի էր նմանում, բայց ինձ մանաւոր կինը և ողորմելը բաւական լաւ էին հագնված։ Եթէ դրանք հարատեւութիւն ունեն, բայց իրանց հարատեւութիւնը թաղցնելու չատ պատճառներ կային։ Այսպիսի խորին և խաւար մի երկրում քրիստոնեաների մի փոքրիկ խումբ գտնելս մեծ ուրախութիւն ազդեց իմ մէջ։ Արտաքսմս ազօթեցի, որ ուրախութեանս համեմատ, սուրբ Հոգու շնորհիւ, այդ խումբը իր չջնջական խաւարը լուսաւորելու համար մի պայծառ ճառագայթ գտանայ։ Ինձ մօտ գտնվողները հանկանալով, որ ես քրիստոնեայ մի եկեղեցու ներկայացուցիչ եմ,—նրանցից մի կին ոտներս ընկնելով, կամենում էր համբուրել։ Բայց ես թոյլ չը տուեցի, և եթէ նրա լեզուն գիտենայի, Պետրոսի կուռնէլիոսին ասածին պէս, կասէի նրան. «վերկաց, ես ինքս էլ մարդ եմ։ Դրա հետ եղող թիմար անունով տղամարդը, որ խստում էր ապրանքէն, աչ ձեռքս բռնեց, նախ դէպի շրջանները տարաւ, համբուրեց, յետոյ ճակատի վրա դրեց։ Այդ պարոնը պատմում էր, 13 տարի է, որ իրանք քահանայ չունեն, և ինքը անձամբ գնացած է եղել մի քահանայ Հնդկաստանից հրաւիրելու և Քաբուլ բերելու, և քահանային մինչև փէշաւոր բերեց, բայց նա վախեցաւ և ճանապարհից յետ դարձաւ։

«Հոկտեմբերի 3-ին, հայերի մի քանի երեխաներ մկրտելու համար, անգլիացոց բանակից, մի հազարապետի և երկաբ հարիւրապետի հետ, ուղղի քաղաքը (Քաբուլ) գնացի։ Եկեղեցու մէջ բաւական ժողովուրդ էր հաւաքված, և սեղանի մօտ մի մեծ ամանով տաք ջուր էր դրած։ Հազիւր խորհուրդը կատարելուց յետոյ, իմ ընկերները ցանկացան տեսնել եկեղեցու պատկերները, խաչերը և այլ անօթները, և հարցրին, արդեօք կարող են տաճարը մտնել։ Նրանց պատասխանեցին, թէ կարող են եթէ իրանց սրերը կարձակեն և ցած կը դնեն։ Օֆիցերները իրանց սրերը արձակելով, յանձնեցին Թեմուրին պահելու, և իրանք տաճարի մէջ մտնելով, սկսեցին եկեղեցու սպասներին նայել։ Ցնծելով, թէ որ ատոհման յարգանք և սէր ունէին այդ մարդիկը դէպի Աստուծոյ տունը, ես չատ ուրախ եղայ։ Ես երբ հարցրի, թէ Քաբուլի մէջ այնքան բռնութիւն և հարատեւութիւններ կրելով, այլ ես ինչու են մնում այդ քաղաքում—նրանք ինձ պատասխանեցին. «Ա՛խ, մեր եկեղեցին ինչպէս կարող ենք թողնել և գնալ։ Մկրտութեան խորհուրդը կատարելուց յետոյ մեզ հրաւիրեցին մի տուն, ուր հիւրասիրեցին մեզ թէյով և քաղցրաւենիքով։ Այնտեղ ես տեսայ Մարիամ և Սեղբունդուս անունով երկու մանուկներին, որոնց 1839 թ.ին մկրտել էր մտաւոր Ֆիկոթը, թէ այս մանուկները և թէ նրանցից չափահասները գեղեցիկ դէմք և վայելուչ կազմուածք ունէին։ Գանցից բաժանվելու ըսպէսում ես իմ մտքում ասում էի. «Մնացէք բարեաւ, Քրիստոսով սրբված բարեկամներ, մնացէք բարեաւ։ Եթէ գտնվում են ձեր մէջ ապրութեան և մոլոր հաւատքի նշոյներ անգամ,—բայց ձեր սէրը և պատիւը, որ քրիստոնէաբար ցոյց էք տալիս օտարներին, և ձեր մտերմութիւնը, որ ունէք դէպի քրիստոնեաների ներկայացուցիչները, և ձեր համակրութիւնը ու յարգանքը, որ ունէք դէպի Աստուծոյ տունը և դէպի

*) Այդ յօդուածը տպվեցաւ կ. Պոլսի հայերէն տառերով և թուրքերէն լեզուով հրատարակվող «Մանդուսէի Լիֆեռաբ» լրագրի մէջ։